69 Ի՜նչ մեծ ու քաղցր է պատգամն այն, երբ հավատանք,

1. Ի՜նչ մեծ ու քաղցր է պատգամն այն, երբ հավատանք,
Թե երեկ, այսօր ու հավիտյան, Հիսուս միշտ նույնն է,
Դեռ կփրկե մեղավորներ, բուժե ցավեր Ան,
Լռեցնե սաստիկ հովեր, փա՛ռք Իր սուրբ Անվան:

Երեկ, այսօր ու հավիտյան
Բնավ չի փոխվիր Ան,
Չկա ուրիշ անփոփոխ բան,
Փա՛ռք Իր սուրբ Անվան: (3)
Անփոփոխ է Հիսուս միայն,
Փա՛ռք Իր սուրբ անվան:

2. Մեղավորաց Բարեկամն է, կփնտրե արդ քեզ,
Ելի՛ր, մեղաց բեռդ Անոր բեր՝ ծնրադիր ու հեզ:
Ըսավ. «Քեզ չեմ դատապարտեր, մեղք մի՛ գործեր ալ»:
Կներե արդ քու ալ մեղքեր, նույն կերպով դարձյալ:

3. Հաճախ բուժեց տառապյալներ Իր ձեռքով հզոր,
Կվերցնե վիշտն ու ցավն մեր խոսքով մը այսօր:
Իրեն դպչող կնոջ տվավ Հիսուս զորություն,
Նույնը կուտա սիրով անբավ զԻնք խնդրողներուն:

4. Ինչպես Էմմաուս գացողներուն հետ քայլեց Հիսուս,
Նույնպես հետն է մեր ամենուն, կներշնչե հույս:
Քիչ ատենեն պիտ տեսնենք զԱյն, շուտով եկուր, Տե՛ր,
Նույն Յիսուսն պիտ ըլլայ սակայն, որ համբարձավ վեր: